ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի մայիսի 27-ից 28-ը Ռուսաստանի դաշնություն գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ՝**

Ժենյա Տեր-Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝**

2026 թվականի մայիսի 27-28-ը, Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա)

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ՝**

Միջպետական ավիացիոն կոմիտե (ՄԱԿ)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝**

Միջպետական Ավիացիոն կոմիտեի կողմից սույն թվականի մայիսի 27-28-ը կազմակերպվող «Ավիացիոն պատահարների քննություն և կանխարգելում» խորագրով 32-րդ գիտագործնական համաժողովին մասնակցություն:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

«Քաղաքացիական ավիացիայի և օդային տարածքի օգտագործման մասին» համաձայնագրի անդամ պետությունների 2025 թվականի քաղաքացիական ավիացիայի անվտանգության վիճակի ներկայացում, մի շարք ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության արդյունքների ներկայացում, պատահարների համակարգային պատճառների բացահայտում, պատահարի ենթարկված ավիացիոն տեխնիկայի պրակտիկ նյութերի ներկայացում, այց ՄԱԿ լաբորատորիա:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ.

Գործուղման ընթացքում մասնակցել եմ տարբեր ավիացիոն պատահարների վերլուծությունների, ինչպես նաև մասնակից ավիացիոն ոլորտի մասնագետների հետ քննարկումների:

8. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի 75-րդ կետի կատարում, այն է՝ ուժեղացնել ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման լիազորված մարմնի ինստիտուցիոնալ կարողությունները, և միջազգային ստանդարտները:

Ժենյա Տեր-Վարդանյան
29.05.2026թ.